ԴԻԼԻՋԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Դեռ վաղ ժամանակներից պատմական Աղստևի հովիտը, համարվելով Հայաստան լեռնաշխարհի գեղատեսիլ անկյուններից մեկը, գտնվել է մարդկանց ուշադրության կենտրոնում: Նաև հայտնի է, որ այդ ժամանակներից ի վեր մեր երախտավոր նախնիները, հիմնավորվելով այստեղ, հող են մշակել, անասուններ պահել, վանքեր ու եկեղեցիներ կառուցել, զավակներ ծնել, մեծացրել, մկրտված դավանանքին հարազատ մնալով՝ շրջապատին կյանք ու հարատևություն պարգևել: Դրանց խոսուն վկաներն են ինչ-որ չափով պահպանված և այսօր մեզ հասած այդ պատմական վայրերի ու շինությունների լուռ ու մունջ մնացորդներն ու հետքերը, կանգուն և կիսավեր վանքերն ու պատմական հուշարձանները, ժամանակի ծանր ժանիքներից մազապուրծ եղած և այս հովտի տարբեր անկյուններում պահպանված դրանց անգնահատելի մասունքները՝ Հաղարծին, Մխիթար Գոշ, Կիրանց, Սրվեղ, Ջուխտակ և այլ վանքեր, որոնք մեծ հիացմունք են պատճառում բազմաթիվ մեծատաղանդ մասնագետների մոտ:

Այս հովիտը գտնվում է Գուգարաց աշխարհում, որը տարբեր ժամանակներում կոչվել է նաև Հովք, Սևորդյաց երկիր և այլն: Հովտին ավելի մեծ շուք է տալիս նրա ձորով հոսող, լեռների առվակներից սնվող քաղցրահամ Աղստև գետը, որը, հոսելով դեպի վար, իր կենարար շունչն է տալիս շրջակայքի կանաչազարդ ծառ ու ծաղկին, մարգագետնին՝ ավելի բարետես դարձնելով նրան:

Աղստևի գետամերձ տարածքով կամ, ինչպես ասում էին, Դիլիջանի ձորով Թիֆլիսից Դիլիջան և Դիլիջանից Գյումրի և Երևան են ճյուղավորվում ու ձգվում հատուկ նշանակություն ունեցող փոստային հաղորդակցության վաղեմի ճանապարհները, որոնք կոչվել են նաև արքունական: Ձորի ճանապարհների հատման այդ տարածքում էլ փռված է Դիլիջան բնակավայրը: Այսօր նա ունի բազմաթիվ հանգստյան տներ, մի շարք կրթամշակութային հիմնարկներ, թանգարաններ, առողջարաններ և այլն:

Սակայն իրավացիորեն հարց է ծագում. ինչպե՞ս է, որ այսպիսի մի աշխույժ, գեղեցիկ բնակավայրի ժողովուրդ չի ունեցել իր դավանանքի օջախը՝ եկեղեցին, որին դարեր շարունակ դավանել է նա: Մի՞թե հոգևոր ծեսերը կատարելու համար նրա բնակիչները ամեն անգամ հարկադրված գնացել են վերը նշված հեռու սրբատեղիներն ու վանքերը:

Հարցին պատասխանելու և տարակուսանքը փարատելու նպատակով դիմենք փաստաթղթերին ու գրավոր աղբյուրներին: Նախ ասենք, որ Դի-

լիջանը միշտ էլ ունեցել է իր եկեղեցին, որն իր շուրջն է համախմբել տեղի համայնքին: Այն կոչվել է ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, բնակիչները համարվել են հայ քրիստոնյաներ, լեզուն հայերենն է եղել: Սակայն Հայաստանի մյուս շրջանների բնակավայրերի պես այս տարածքը ևս, պատերազմներին թարկվելով օտարների՝ մոնղոլների, արաբների, լեզգիների, պարսիկ և թուրք ցեղերի հարձակումներին և ասպատակություններին, բնակչությունը կոտորվել, գերեվարվել կամ փախել է այլ վայրեր, դրա հետևանքով մարդազուրկ են դարձել շատ գյուղեր: Հետագայում ոմանք, վերադառնալով հարազատ վայրերը, վերանորոգել են ավերվածները, կառուցել նորերը և շարունակել կյանքը:

Ներկա Դիլիջանի պատմությունը, ըստ գրավոր և նյութական աղբյուրների, սկսվում է մոտավորապես 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի ար-



Դիլիջան. կենտրոնում՝ Ս. Էջմիածին եկեղեցին

շալույսին: Այդ մասին են վկայում նաև առանձին հիշողություններ, Ս. Աստվածածին եկեղեցու չափաբերական (1827—1830 թթ.) մատյաններ[1]: Իսկ Սարգիս Հասան Ջալալյանը իր «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» գրքում Դիլիջանը նկարագրում է հետևյալ կերպ. «Դիլի է **քաղաքագյուղ** վկայեալ է ի հին նշանաց, և այժմ են ի սմա տունք 20 զետեղեալք ի մէջ երկուց ճանապարհաց ԾԱՂԿԱՁՈՐՈՅ և ԲԱՁԿԻ ձորոյ, ունի ազնուահամ ջուր լի կարմրախայթ ձկամբք, գոն ի սմա տեղիք **աւերեալ եկեղեցւոյ** և բաղանեաց»[2]: Այս հակիրճ և սեղմ հաղորդումով նա ոչ միայն նկարագրում է, թե որտեղ է գտնվում բնակավայրը, այլև բնութագրում նրա շրջապատն ու ընդգծում, որ Դիլիջանը դեռ վաղ ժամանակներից եղել է բնակավայր և ունեցել է իր եկեղեցին:

---

[1] Հայաստանի Հանրապետության ՊՊԿ արխիվ, ֆ. 93, գ. 14, ց. 1:

[2] **Հասան Ջալալյան,** Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, 1842, Տփխիս, էջ 128:

Բացի հիշյալ եկեղեցուց, որի ավերակները պահպանվել էին մինչև մեր դարի երեսնական թվականները, Շամլուղի գետամերձ ձախ տարածքում, ներկա ավտոկայանի շենքի տեղը[3], Դիլիջանը ունեցել է նաև իր գործող եկեղեցին՝ կառուցված հեռագրատան մերձավորությամբ, վերին թաղում (Դիլիջանի միջով անցնող խճուղին այն բաժանել է երկու թաղի, որի անտառի կողմը կոչվել է վերին թաղ, իսկ ձորի կողմը՝ ներքին թաղ) կամ այժմյան քաղաքային կենտրոնական փոստատան հարակից տարածքում[4]:

Ժամանակի ընթացքում խարխլվում և շարքից դուրս է գալիս նաև այս եկեղեցին: Բնակիչները, զրկվելով մշտական գործող աղոթատնից, ստիպված ծեսերը, ժամասացությունները կատարում են ինչ-որ ժամանակավոր կացարաններում, իսկ ամռան ամիսներին նշանավոր հոգևոր տոները նշում էին մոտակա Ջուխտակ Վանք, Հաղարծին և Պուճուր Դիլի ուխտատեղիներում: Եկեղեցու խարխլման մասին է վկայում մեկ այլ փաստաթուղթ՝ գավառի Հայոց վանքերի կալվածքների կառավարիչ և Հաղարծնի վանահայր Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանի 1870 թվականի Էջմիածնին հղած խարխլված Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին գրությունը և այն քանդելու վերաբերյալ նահանգապետի առաջարկի 1872 թվականի Էջմիածնի կողմից մերժումը: Այս գրությունից մենք տեղեկանում ենք, որ դեռևս եկեղեցու պատերը կանգուն են, իսկ նրա չափերն են՝ արևելքից արևմուտք՝ 7 սաժեն երկուսուկես արշին կամ, ըստ Էփրիկյանի տրված չափերի՝ 14 մետր, լայնությունը՝ 3 սաժեն մեկ արշին կամ 7 մ տասնմեկ սանտիմետր[5]: Տեղի և ժամանակի համար դա բավականին խոշոր շինություն է:

Այդպիսով Դիլիջանի բնակիչները, զրկված լինելով մշտական գործող եկեղեցի ունենալու հնարավորությունից, ծխատեր քահանա Տեր Հովհաննեսի հորդորներով ժողովում են շուրջ 500 ռուբլի արծաթ և 1860 թվականի մարտին նոր եկեղեցի կառուցելու ակնկալիքով մի դիմում առաքում Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին (Մատթեոս Ա), որի տակ ստորագրում են 38 մարդ, դրանց թվում՝ Դանիել քյոխվա Գրիգորովը, Զաքար Մարտիրոսովը, Մկրտիչ Ղարախանովը, Խաչատուր Շահնազարյանը, Սարիբեկ Դավթյանը, Պետրոս Աղավելովը և այլք: Միևնույն ժամանակ նրանք իրազեկում են, թե ինչ շինանյութերից պետք է կառուցվի եկեղեցին, «որից տեղում շատ կայ և էժան կնստի իրանց համար, իսկ եթէ հանկարծ գումարը պակասի, ապա գան այստեղ **աստուածաաէր ժողովուրդ** եթէ ի սէր Աստուծոյ խնդրեմ կտան փող ըստ իրանց կարեաց, ինչպէս տեղոյս Մարտիրոսն Ստեփանի Դավթեանց խոստացաւ յիշատակ տալ կիր, որքան հարկաւոր է, մշակ, սել կամ արաբա, եզն, այդպէս կարելի է իմ տկար մտքովս գլուխ գայ ու կատարումն լինի»[6]:

Ինչպես ցույց է տալիս խնդրի հետագա ընթացքը, Էջմիածնի կողմից համապատասխան թույլտվություն տրվում է, և անմիջապես ձեռնամուխ են լինում եկեղեցու շինարարության գործին ու երկու տարում ավարտում այն: Եկեղեցին, որը կրկին կոչվում է Ս. Աստվածածին, կանգնեցվում է այլ վայ-

---

[3] ՀՀՊՊԿ արխիվ, ֆ. 56, գ. 5851, ց. 1, և ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի Խրոնիրդային Հայաստանի պատմական հուշարձանները, սերիա 1, էջ 23—24:

[4] ՀՀՊՊԿ արխիվ, ֆ. 56, գ. 5851, ց. 1:

[5] Նույն տեղում, ֆ. 56, գ. 5851, ց. 1:

Էփրիկյան Հ. Ա., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պրակ. Ա, Վենետիկ, 1900 թ., էջ 575:

[6] ՀՀՊՊԿ արխիվ, ֆ. 56, գ. 3953, ց. 1;

ում, այժմյան ԴԻԼԻՋԱՆ կինոթատրոնի տեղում: Այն ամբողջապես կառուցվել է 1862 թ.: Դրա վկայությունն է Մեսրովբ Նախիջևանցի Սմբատյանի «Տեղեկագիրը», որտեղ նա գրում է. «Գնացինք գիւղի եկեղեցին տեսինք որ յանուն Սուրբ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ քանդուած ու քայքայուած և անտի վայր իջնելով մի փոքր մտինք նոր յայս 1862 թուին շինուած եկեղեցին, որ նոյնպէս Ս. Աստուածածնի, որ ներքին թաղի մէջ ձորաբաշին հասարակ քար ու կրով կամարակապ շինուած էր, միայն ՍԵՂԱՆԸ սրբատաշ քարով, առանց զանգակատան և կաթողիկէի: Գիւղն ուներ 75 տուն հայ բնակիչք»[7]:

Եվ այսպես, Դիլիջանը կառուցում է իր նոր եկեղեցին, որտեղ կատարվում են ծեսերն ու հոգևոր խորհուրդները: Դիլիջանում, բացի հայերից, բնակվում էին նաև ռուսներ: Այստեղ էր տեղավորված զինվորական կայազորը՝ բաղկացած ռուսներից, որոնք, չունենալով իրենց քահանան, խլռնվում էին հայոց եկեղեցուն և երբեմն եկեղեցական տոներն անց էին կացնում հայերի հետ: Ինչպես 1884 թ. հունվարի 27-ին, Զրօրհնյաց օրը, որ այստեղ կատարվեց շատ շքեղ, տեղական ռուսները և զորքը այստեղից հայերի հետ, զորաց ուղեկցությամբ, դիմեց գետը, դրոշակը հետևում էր մեռոնակրին, ուսումնարանի աշակերտները, իրենց ներդաշնակ երգով, «կրում էին եկեղեցական սպասները մինչև գետը և այնտեղից՝ եկեղեցին: Սուրբ Մեռոնը թափուեցաւ զորաց հրաձգութեան որոտումի տակ, զորքը բաժանուեցաւ օրհնած ջուրը սրսկելուց յետոյ»»[8]:

Տասնամյակներ անց խարխլվում և շարքից դուրս է գալիս նաև այս եկեղեցին, իսկ Դիլիջանը մեծանում-ընդլայնում է իր տարածքը, ավելանում են բնակչությունը, հատկապես ամռան ամիսներին խիստ աշխուժանում է կյանքն այս քաղաքում: Իրենց հանգիստն անցկացնելու և կազդուրվելու նպատակով այստեղ են ժամանում բազմաթիվ մեծահարուստներ, պաշտոնյաներ, գրականության և մշակույթի գործիչներ, նույնիսկ Ռոստովից և Խարկովից: Այս հանգամանքը ժամանակի հրամայական պահանջ է դարձնում նոր՝ ավելի ժամանակակից եկեղեցի ունենալու համար: Սակայն պահանջը պահանջ, իսկ հնարավորությունները խիստ սահմանափակ: Որքան գնում, այնքան նոր եկեղեցի ունենալու պահանջը օրըստօրե մեծանում է: Նրանց օգնության է գալիս դիլիջանցիներին լավածանոթ շուշեցի մեծահարուստ տիկինը, Հաբետ Տեր-Հակոբյանի այրին՝ Եվան, որի ամուսինն իր մահկանացուն կնքել էր Դիլիջանում: Նա իր ամուսնու հիշատակը Դիլիջանում հավերջացնելու և տեղացիներին երախտահատույց լինելու նպատակով ձեռնարկում է նոր եկեղեցու կառուցումը (հնից ոչ հեռու): Ձեռնամուխ լինելով այս գործի իրականացման աշխատանքներին, նախ պատվիրվում է պահանջվող անհրաժեշտ գծագրերը և որոշվում կառուցումը սկսել 1896 թվականին, բայց աշխատանքները սկսվում են 1899-ին: Այն կառուցվում է թրծած աղյուսով, ամուր կապող շաղախով, պսակվում գմբեթով ու զանգակատնով, որի համար ծախսվում է մոտ 20,000 ռուբլի գումար: Դա մի խոշոր գեղեցիկ կառույց էր, որի օծումը բնակչության և այստեղ ժամանած բազմաթիվ հյուրերի ներկայությամբ կատարվում է՝ կրկին Սուրբ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ անունը կրող եկեղեցու հանդիսավոր արարողությունը: Այս մասին ՄՇԱԿԸ իր օգոստոսի համարում հայտնում է. «Ամսիս 12-ին փառավոր

---

[7] **Մեսրովբ Սմբատյան,** Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազիտ գավառ, 1895 թ., էջ 186—187:

[8] «Նոր-Դար» 27/01—1984, թիվ 14:

կերպով օծվեց Դիլիջանի Հայոց նոր եկեղեցին, որը կառուցվել է տիկին Տեր-Հակոբյանցի ծախքով ի հիշատակ հանգուցյալ ամուսին պարոն Հաբեթ Տեր-Հակոբյանցի, որը թաղված է արևմտյան դռան մոտ»[9]: Օծման արարողությունը կատարում է գերաշնորհ Տ. Բարդուղիմեոս եպիսկոպոս Գևորգյանը: Հաջորդ օրն էլ այստեղ կատարվում է գրական և հաւարակական գործիչ Գրիգոր Զանշեյանի մահվան առաջին հոգեհանգիստը: Այդ նույն տարվա մայիսին տեղի է ունենում նաև Ղազախ քաղաքի մեծահարուստ Մկրտիչ և Ալեքսանդր Զաղեթյանների միջոցներով կառուցված Սուրբ Վարդան եկեղեցու օծումը: Այդպիսով քրիստոնեության ընդունման ուղիղ 1600-ամյա տարելիցին Աղստևի հովտի երկու բնակավայրերում տեղի ունեցան երկու հոգևոր օջախների բացումը:

Եկեղեցին իր ճարտարապետական ոճով համարվում էր տվյալ ժամանակի և տարածքի լավագույն շինությունը ու Դիլիջանի ամենագեղեցիկ կառույցը: Դրա վկայությունն է պահպանված և իմ կողմից ձեզ տրամադրվող եզակի մի լուսանկար, որը ժամանակին կատարել է տեղի ճանաչված լուսանկարիչ Վիսոչկինը:

Բարերարուհի տիկին Եվա Տեր-Հակոբյանի կատարած այդ վսեմ գործը արժանանում է Հայրապետական հատուկ օրհնության և գնահատանքի կոնդակի[10]: Ցավոք, եկեղեցին ապրեց միայն 35 տարի: Այն դարձավ Խորհրդային երկրում ծավալված հակակրոնական քաղաքականության զոհը: 129 թվականին նախ փակվեց և արգելվեց այնտեղ կատարելու որևիցե հոգևոր միջոցառում, այնուհետև ինչ-որ ժամանակ վերածվեց պահեստի, իսկ 1935—1936 թթ. եկեղեցին ընդհանրապես քանդվեց[11]: Տողերիս հեղինակը և իմ հասակակիցներից շատերը ականատեսը: Ժողովուրդը սարսափի մեջ էր, կանայք և տարեց մարդիկ շրջում էին դեմքերը, որպեսզի չտեսնեն, թե ինչպես են տապալում նրա գմբեթն ու վեմերը: Ես հիշում եմ եկեղեցու զանգը, որը, գմբեթից իջեցնելուց հետո, կախեցին մեր դպրոցին կից կանգնեցված հենասյուներից՝ դասերի սկիզբն ու ավարտը ազդարարելու համար: Դա կարծեք թե լավ էր, մոտ վեց տարի լռելուց հետո լսում էինք նրա ղողանջը, սակայն որոշ ժամանակ անց այն տեղափոխեցին և տեղադրեցին Դիլիջանի նորակառույց հրշեջ խմբի բակում, շենքի մուտքի մոտ (այժմյան Հիսունամյակի բարձունքի վրա)՝ հրդեհների դեպքում տագնապ ազդարարելու համար: Հետագայում, շենքը քանդելուց հետո, նրա ճակատագիրը անհայտ է:

Այս եկեղեցին, որը, շարունակելով իր հոգևոր գործունեությունը, պետք է ժողովրդին հաղորդակցեր ազգային ավանդույթներին, կատարեր այդ ավանդույթներով կյանք մտած հոգևոր ծեսերն ու միջոցառումները, իր շուրջը համախմբեր ավանդապահ դիլիջանցիներին, ապրեց միայն 35 տարի: Նա դարձավ խորհրդային երկրում տարվող աթեիստական քաղաքականության նահատակը: Եկեղեցու տեղը կառուցվեց Շիրվանզադեի անվան մշակույթի տունը, որը տարիներ անց նույնպես քանդվեց և նրա փոխարեն կանգնեցվեց ներկա «Դիլիջան» կինոթատրոնի շենքը:

---

[9] «Մշակ», 1901 թ., 145, 181, 184 համարները: «Նոր-Դար», 1896, թիվ 16 և 1901, թիվ 128:

[10] «Արարատ», 1902, հունիս-հուլիս, էջ 578:

[11] **Ստեփան Ստեփանյանց,** Հայ Առաքելական Եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք, «Ապալոն» 1994 թ., էջ 72—73:

Այսպիսով, Դիլիջանում որպես ազգային կրոնի հոգևոր օջախ ծառայող եկեղեցին լրիվ վերացվեց: Տասնամյակների ընթացքում տեղի ունեցող հակակրոնական քաղաքականությունը և սերնդափոխումը մարդկանց բերեց իրենց դարավոր հոգևոր ակունքների և ավանդույթների ուծացման:

Ինչպես գիտենք, Աղստևի հովտի բնակավայրերից մեկն էր նաև Դիլիջանամերձ Շամախյան (նախկին Պողոսքիլիսա) գյուղը: Այն այժմ համարվում է Դիլիջանի խոշոր թաղամասերից մեկը: Այդ գյուղը ևս ունի հին պատմություն: Բացի նրա շրջակայքում պահպանված մի շարք հինավուրց վանքերից, մինչև այսօր էլ գյուղամերձ բարձունքի վրա, գերեզմանոցի մոտ, կանգնած է Սուրբ Սարգիս մատուռը: Իսկ գյուղի մասին Հասան Ջալալյանը վերը հիշատակված իր գրքում գրում է. «Պողոսքիլիսա է փոքր ագարակ, բնակիչք են ի նմա տունք 20, տեղին է անվայելուչ, են ի սմա մակատեղիք անասնաց արգասաւոր և աճեցուն, ջուրն և օդն է առողջարար, շուրջ զորով են անտառի լերինք, ունի զերկու սագաշեն եկեղեցի»[12]:

Իսկ Մակար Բարխուդարյանը իր «Արցախում» գրում է, որ գյուղի բնակիչները եկել են այստեղ Հասան Խանի (1795—1796 թթ.) ժամանակ Երևանից և Արզնիի Գյամրիզ գյուղից: Նշում է նաև, որ գյուղն ունի պատվական օդ, ջուր, կլիմա, երկար կյանք՝ 115 տարի, իսկ եկեղեցին է **Ս. Աստվածածին**[13]: Մեր տրամադրության տակ ունեցած փաստերը վկայում են, որ երկար տարիներ եկեղեցին չի ունեցել իր ծխատեր քահանան: Ըստ գյուղի չափաբերական մատյանների, որտեղ կատարվել են ամուսնացողների, ծնվողների, մահացողների տարբեր տարիների գրանցումները, նրանք գրվել են Դիլիջանից և այլ գյուղերից հրավիրված Տեր-Հովհաննես, Տեր-Բարսեղյանց, Տեր-Մկրտչյան և Խաչատուր քահանաների կողմից:

Հատկանշականն այն է, որ այդ եկեղեցին բոլոր մատյաններում հիշատակվում է որպես Ս. Աստվածածին, իսկ հետագայում նաև Ս. Պողոս: Թե ինչու էր այդպես՝ հնարավոր չեղավ պարզաբանել[14]:

Այդ եկեղեցու կառուցման ստույգ տարեթիվը անհայտ է, թեև արտաքուստ հին է երևում, անշուք, չունի զանգակատուն և գմբեթ, սակայն այն երբեք արգելք չի հանդիսացել իր ամբողջ գոյության ընթացքում բավարարելու տվյալ համայնքի անդամների հոգևոր պետքերն ու ծեսերը, նրանց իր շուրջն է համախմբել և լուծել մարդկանց առօրյա պահանջներն ու խնդիրները: Եկեղեցին երեխաներին կրթելու կամ, ինչպես ասում են, գրի սև ու սպիտակին ճանաչ դարձնելու համար չի ունեցել իր ծխական դպրոցը: Մանուկները ստիպված հաճախել են 5—6 կիլոմետր հեռավորության Դիլիջանի ծխական դպրոց[15]: Թեև գյուղում գրագետ մարդիկ եղել են, սակայն չեն կարողացել կազմակերպել կրթական գործը և այդ հարցը միշտ մտահոգել է նրա քահանային, գյուղի մարդկանց: Չնայած գյուղացիների հետամնացությանը և սոցիալական ծանր պայմաններին, այդուհանդերձ նրանք կարողացան 1881 թվականին այստեղ հանգստի ժամանած իրենց հայրենակից Երևանի Գայանյան օրիորդական դպրոցի հիմնադիր և տնօրեն, Ներսես Աշտարակեցու որդեգիր բարեկրոն Հովսեփ Մելյանի հորդորներով կարճ

---

[12] **Հասան Ջալալյան,** Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, 1842 թ., Տփխիս, էջ 128:

[13] **Մակար Բարխուդարյան,** «Արցախ», 1895, Բագու, էջ 361:

[14] ՀՀՊՊԿ արխիվի ֆ. 53, գ. 6115, 6116, 6117 և 6118, մաս II, ց. 2:

[15] «Մեղու Հայաստանի», 1881, մայիս, թիվ 80—85:

ժամանակամիջոցում մի գումար (400 ռ.) ժողովել և սկսել շենքի շինարարությունը, սակայն նրա մեկնումից հետո սկսած աշխատանքները դադարեցին: Այն ձգվեց մի քանի տարի և վերսկսվեց միայն 1889 թվականին Մակար Կաթողիկոս Թեղուտցու կոնդակի համաձայն, Վրաստանի և Իմերեթի թեմական դպրոցների տեսուչ հայր Եղիշե Գեղամյանի միջոցով ու սկսեց 1890 թվականից գործել[16]: Թերևս թեմայից մի փոքր շեղմանը, պետք է ասենք, որ այս եկեղեցու գործունեությունը բարելավելու համար կարևոր էր սեփական-մշտական ծխատեր քահանա ունենալը: Նա էր, որ պետք է կատարեր ու բավարարեր բնակչության բոլոր կարիքները և իր ամենօրյա քարոզներով ու հորդորներով ամուր կերպով նրանց կապեր եկեղեցու հետ: Այս առիթով մի փոքր ետ գնանք և ասենք, որ 1868 թվականին այստեղ՝ Պողոսքիլիսա գյուղի քահանա է նշանակվում Քարվանսարայի (Իջևան) գյուղի ծխական դպրոցի ուսուցիչ, ծնունդով ղարաքիլիսեցի Կարապետ Թումանյանը, որը մինչ այդ ձեռնադրվում է քահանա: Իսկ երբ բացվում է դըպրոցը՝ Կաթողիկոսի կոնդակով հաստավում է նրա հոգաբարձու ու շարունակում թե՛ կրթական և թե՛ հոգևոր աշխատանքը գյուղում[17]: Այդ մասին իր ստեղծագործություններում հաճախ է հիշատակում գյուղի կաթողը անվանած և նրա ծոցից դուրս եկած հանրահայտ գրող Վախտանգ Անանյանը:

Եկեղեցին դարձել էր ժողովրդի կյանքի անքակտելի մասը՝ իր դժվարություններով ու հաջողություններով հանդերձ: Այդ պատճառով եկեղեցու գործունեությունը բավարարելու և նրան ավելի բարետես դարձնելու նպատակով բնակչության նախաձեռնությամբ 1908 թվականի նոյեմբերի 30-ին 112 մարդկանց ստորագրությամբ մի համախոսական-վճիռ է կայացվում՝ նրա բակը ընդլայնելու և շրջապատը բարեկարգելու համար, եկեղեցուն կից հողամասը իր շինություններով Իվան Մարտիրոսյանից գնելու և այդ նպատակով թույլատվության խնդրանքով դիմում ներկայացնում Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիային: Այն բավարարվում է: Կալվածքը գնահատվում է 400 ռուբլի և որոշվում, որ գումարի կեսը պետք է վճարի եկեղեցին, իսկ մյուս կեսը՝ գյուղացիները: Վճարելուց հետո քանդվում են պայմանավորված հարակից շինությունները ու բարեկարգվում եկեղեցու շրջապատը:

Հետագայում, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ այստեղ, 1928—1929 թվականներին, փակվում է նաև այս գյուղի Ս. Պողոս եկեղեցին և դադարեցվում նրա հետագա գործունեությունը: Պետք է նշել, որ շնորհիվ բնակչության, եկեղեցին պահպանվում է: Հետագայում, երկար հորդորներից հետո, այն վերցվում է պետության տնօրինության տակ: Խոսվում էր, որ իբր նախատեսված էր վերականգնման աշխատանքներ կատարել, սակայն դրական ոչինչ չէր նկատվում: Երկար ժամանակ անխնամ մնալու հետևանքով խարխլվել էր եկեղեցին: Տողերիս հեղինակը որոշեց սեփական աչքերով տեսնել այդ պատմական հուշարձան-սրբատեղին: Քանի որ ես այն երբեք չէի տեսել, հակված էի տեսնելու մի գեղեցիկ շինություն: Սակայն երբ տեղ հասանք, բացի վերջին տասնամյակներին կառուցված նոր շենքերից, արտաքուստ աչք զարնող ոչինչ չնկատեցի: Եկեղեցին շրջապատված էր

---

[16] Նույն տեղում, 24/9—1881, թիվ 193:

[17] «Արձագանք», 1890-ի թիվ 25 և 27:

«Արարատ», 1889, թիվ 12, 1890, թիվ 1, կոնդակները՝ դպրոցը բացելու և հոգաբարձուներ նշանակելու մասին:

բնակելի շինություններով և հիշեցնում էր գյուղական մի գեղանափոր կառույցի: Վիմագիր որևէ արձանագրություն չտեսա: Բակում, մուտքի մոտ, կային մի քանի խաչքարեր, որոնք, ըստ տեղացիների, բերվել էին այլ տեղերից: Մտանք ներս: Թեև համեմատաբար խոշոր, ամուր թաղակապ-օրորոցաձև կառույց էր, ծածկը պահպանված, սակայն անխնամ ժամանակը իր անցանկալի հետքն էր թողել, նշմարվում էր կից սենյակը, խարխուլ բեմը, քայքայված հատակը: Այն կորցրել էր իր վաղեմի տեսքը, բայց նրա ընդարձակ դահլիճը և հենց ինքը եկեղեցին հուշում էր, որ նա է հանդիսացել գյուղի միակ հոգևոր ապավենը: Պետք է գոհ լինել, որ պահպանվել է գոնե այդքանը: Վերջապես այսօր, երկարատև օտարումից հետո, այն վերադարձվել է իր իսկական տիրոջը՝ Էջմիածնին: Գտնվելով Գուգարաց հոգևոր թեմի առաջնորդության տրամադրության ներքո, գերաշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանի ջանքերով համապատասխան աշխատանքներ են ձեռնարկվել եկեղեցին վերանորոգելու և կյանքի կոչելու: Համոզված ենք, որ ժողովրդի ակտիվ մասնակցությամբ իրագործվող այդ ջանքերը կպսակվեն հաջողությամբ, և, հավատարիմ իր պատմական ավանդույթներին, կրկին այնտեղ կլսվի հոգևոր հոր աղոթքներն ու սրբագործված եկեղեցական կանոնները:

Այսօր քան երբեք խիստ անհրաժեշտություն է Հայ Առաքելական Եկեղեցու հետևողական քարոզները ու խորհուրդները ուծացած և շատ բանից անտեղյակ հավատացյալների համար, որովհետև ի հայտ եկած բազմաթիվ աղանդավորներ, քրիստոնեության անունով մտնելով ժողովրդի զանգվածները, ցանկանում են նրան շեղել, անջատել իր դարավոր ավանդույթից, որով մեծ հարված են հասցնում մեր ազգային, առաքելական Եկեղեցուն: Այդ պատճառով ժողովուրդը կարոտ է ճշմարիտ քարոզի և ուղղության, որը նրան պետք է մատուցի Եկեղեցին և նրա հոգևոր հայրերը: Անկասկած դարերի կենսունակություն ունեցող մեր Եկեղեցին կհաղթահարի այդ խոչընդոտները ևս: Ամփոփելով ասենք, որ վերը շարադրած փաստերը ցույց են տալիս, որ չնայած Դիլիջանի եկեղեցիները տարբեր ժամանակներում ու պատճառներով խարխլվել-քանդվել են, սակայն նրա ավանդապահ ժողովուրդը չորս անգամ կառուցել է նորը ու շարունակել իր հավատքը, որոնցից վերջինիս ականատեսն ենք եղել նաև ժամանակակից տարեցներից շատերս:

Այժմ Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանի ջանքերով աշխատանքներ են տարվում 1990 թվականին նոր տեղում, Դիլիջանի լճամերձ կանաչազարդ գեղեցիկ տարածքում, իր իսկ կողմից օծված նոր, Սուրբ Հակոբ եկեղեցու շինարարական աշխատանքները շարունակելու ուղղությամբ, որի կառուցման նպատակին իրենց ավանդն են բերել նաև երախտավոր լոնդոնահայ ամուսիններ Հակոբ և Ռիտա Չերչյանները:

Թեև երկրում ծառացած դժվարին բազում հարցերի պատճառով շինարարական աշխատանքների դանդաղ ընթացքին, համոզված ենք, որ ոչ հեռավոր ապագայում ոչ միայն նոր սերունդը, այլև մենք կդառնանք ականատեսը մեր այդ նոր՝ Սուրբ Հակոբ եկեղեցու բացման հանդիսավոր արարողությանը, իսկ 2001 թվականին դիլիջանցիները հանդիսավոր պայմաններում նրա ճոխ կամարների տակ կդիմավորեն այդ նշանավոր տարելիցը՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պաշտոնական կրոն ընդունման 1700-ամյակը: Այլապես ինչպես բացատրել այն խորիմաստ խոսքերի նշա-

նակությունը, որը ասել է սրանից դեռևս ավելի քան 120 տարի առաջ հայ մեծ գրող Ռափայել Պատկանյանը. «Ամեն քրիստոնյա հայ չէ, ԲԱՅՑ ԱՄԵՆ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆՅԱ Է»: Լինենք մեծ գրողի այս խոսքերի հավատարիմ հետևորդները, պահպանենք դարերի խորքից եկած մեր երախտավոր սուրբ նախնիների փորձությունները անցած ավանդները:

Ահա այս է Դիլիջանի և Պողոսքիլիսայի ազգային եկեղեցիների ապրած ու անցած դժվար ուղիների ամփոփ պատմությունը, որը ավելորդ չէ իմանալ*:

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

---

* Այս մասին իմ կողմից առանձին հոդվածներ գրվել են «Դիլիջան», «Լուսավորիչ» և «Արձագանք» թերթերում: